ԿԱՐԵՎՈՐ ՄԻ ՃՇՏՈՒՄ

«Լրաբեր հասարակական դիտությունների» պարբերականի 1984 թ. № 3-ում (էջ 41—50) տպագրվել է Հայկ Խաչատրյանի «Մադրասի տպագրատան պատմությունից» շահեկան հոդվածը, ուր «Ողբերգութիւն ի վերայ մահուան Յուլիոս Կեսարոսի» տպագրության թվականը, որ է 1812, կասկածի տակ էր առնվել, ընդունելով, որ գիրքը կարող է տպագրված լինել 1818 թվականին։ Հոդվածագիրը եզրակացրել է, որ «քանի զեռ չկա խնդրո առարկա գրքի իսկական օրինակը, պետք է ընդունել Հ. Դավթյանի վերջին տեսակետը» (էջ 45), այսինքն՝ 1818 թվականը։ Ի դեպ, այդ թվականը հիշված է նաև Հայկական սովետական հանրագիտարանի 7-րդ հատորի մեջ (էջ 129)։


ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ,

ԻՒՐ ՄԱՀՈՒԱՆ

ՅՈՒԼԻՈՍ ԿԵՍԱՐՈՍԻ։

ԴԱՄԱՍԿՈՍ

1812

«Ողբերգութիւն ի վերայ մահուան Յուլիոս Կեսարոսի» գրքի խորագրի լուսապատճենը ժամանակին ուղարկեցինք Հ. Դավթյանին, որի առթիվ «Գրական թերթի» մեջ (1971 թ. հունվարի 22) տպագրվեց մի հոդված, որից արտատպեցին նաև այլ թերթեր։

Դեռևս 1970 թ. մենք ևս այդ մասին հիշել ենք «Սիոնի» մեջ գրած «Հայ տպագիր գիրքը 1801—1850 թվականներին և մի քանի նորահայտ գրքեր» հոդվածում («Սիոն», 1970 թ. հունվ.-

փետր., էջ 65—80), ուր տվել էինք նաև գրքի լրիվ խորագիրը։ Բայց թե ինչու Հ. Դավթյանը հանրագիտարանի մեջ դարձյալ թվականը 1818 է գրել, պարզ չէ մեզ համար։

Այդ գրքից մեկ օրինակ գտնվում է Նոր Ջուղայի ս. Ամենափրկիչ վանքի մատենադարանում, № 2831-ի տակ։ Գրքից այստեղ բերում ենք խորագրի լուսապատճենը, որտեղ շատ պարզեիպարզ թվականը կարդացվում է 1812։

Հուսանք, որ սրանով պարզված կլինի «Հուլիոս Կեսար» գրքի տպագրության ճշգրիտ թվականը, որ է՝ 1812-ը։

Նոր Ջուղա
7 հոկտեմբերի, 1984 թ.

ԼԵՎՈՆ ՄԻՆԱՍՅԱՆ